ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն թիվ 2**

**Հայտերի վերջնական գնահատման նիստի**

**Անգեղակոթ ջրամբարի մոտեցող ճանապարհի քարաթափումից պաշտպանության աշխատանքների** համար ստացված հայտերի վերջնական գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 02/26**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2026-2028թթ. ներդրումային ծրագրում 3-րդ հավելվածում

2026թ. ապրիլի 8-ին, Ժամը՝ 11:10-ին Ք. Գորիս, ՀՀ

| | |
|---|---|
| Մասնակցում էին՝ | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Արամ Մելքումյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Կարեն Պետրոսյան<br>Սևակ Սուրենյան<br>Արմինե Մանուկյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Արման Պետրոսյան |

1. Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով ներկայացված առաջարկներին արձանագրեց որ ներկայացված երեք կազմակերպությունների կողմից տեղեկատվությունը բավարարում է որակավորման չափանիշներին և տեխնիկական պահանջներին և հայտերը վերջնական գնահատեց հետևյալ կերպ.
2. Ներկայացված «Սմարթտեխ» ՍՊԸ-ի, «Պրետոր» ՍՊԸ-ի և «123» ՍՊԸ-ի կազմակերպությունների կողմից հայտերը բավարարում են մրցութային փաթեթի որակավորման պահանջներին և չափանիշներին: Մասնավորապես. հայտատուները ներկայացրել են մեկ պայմանագիր, ոչ պակաս քան 20,000,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի հետ կապված: Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը առաջարկեց իրակնացնել աճուրդ առցանց Կուպա համակարգում՝ ս.թ. ապրիլի 7-ին մրցունակ գներ ստանալու նպատակով:

3. Նույն թվականի ապրիլի 7-ի, ժամը 15:00-17:0-ը, Կուպա համակարգում կայացած աճուրդի ընթացքում «Պրետոր» ՍՊԸ-ն և «Սմարթտեխ» ՍՊԸ-ն գնային առաջարկի փոփոխություն չեն ներկայացրել, իսկ «123» ՍՊԸ-ն կիրառեց զեղչ 129,774 ՀՀ դրամ, որի արդյունքում արձանագրվեցին ստորև ներկայացված գնային առաջարկները:

| N | Մասնակից | Առաջարկված գինը, ՀՀ դրամ առանց ԱԱՀ | Աճուրդի վերջնական գինը՝, ՀՀ դրամ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | «123» ՍՊԸ | 19,589,774 | 19,460,000 |
| 2 | «Պրետոր» ՍՊԸ | 24,166,667 | 24,166,667 |
| 3 | «Սմարթտեխ» ՍՊԸ | 25,002,903 | 25,002,903 |




4. Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովի անդամները միաձայն որոշեցին հաղթող ճանաչել «123» ՍՊԸ-ն և առաջարկել կնքել պայմանագիր առաջարկված 19,460,000 (տասն ինը միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով, (առանց ԱԱՀ)՝ ընկերության ներքին քաղաքականության համաձայն համապատասխանության և ներքին բոլոր հաստատումները անցնելուց հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի անդամներ՝ | Արամ Մելքումյան | |
| | Կարեն Պետրոսյան | |
| | Սևակ Սուրենյան | |

| | | |
|---|---|---|
| | Արմինե Մանուկյան | |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Արման Պետրոսյան | |